



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՄԱՐԻԿ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

09 հունիս 2011թ. թիվ 16-Ն որոշում

գ. Մարմարիկ

ՄԱՐՄԱՐԻԿ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 34 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության 16-րդ հոդվածի 1 մասի 3-րդ կետով և Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

Ավագանին որոշում է

Մարմարիկ համայնքի ավագանու 2010թ-ի դեկտեմբերի 25-ի «2011թ տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ կատարել հետյալ փոփոխությունները.

Ծախսային մասում.

Մարմարիկ համայնքի վարչական բյուջեի 11.1.2.51 ծրագրի, 4891 «պահուստային միջոցներ» հոդվածում հատկացնել գումար.

1. 400.0 հազ. դրամ՝ ճանապարհային տրանսպորտ 04.5.1.51 ծրագրի 4251 «շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածին:
2. 250.0 հազ. դրամ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման 01.1.1.51 ծրագրի 4115 «վարձատրություններ» հոդվածին:
3. 300.0 հազ. դրամ՝ սոցիալական հատուկ արտոնություններ 10.7.1.51 ծրագրի 4729 «այլ նպաստներ բյուջեից» հոդվածին:

Ավագանու անդամներ՝

Կողմ 5	դեմ 0	ծեռնպահ 0
..... Կ. Մելոյան
..... Ռ. Հարությունյան
..... Ա. Սեփոյան
..... Կ. Հունանյան
..... Ա. Ասատրյան

Համայնքի ղեկավար՝



Ա. Պետրոսյան